ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՆԱՔԵՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քանաքեռավան համայնք
ՀՀ,Կոտայքիմարզ, ք.Քանաքեռավան, (0224) 60029 qanaqeravan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 դեկտեմբերի 2013թվականի N 60

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ Թ. 16 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով " Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով՝ Համայնքի ավագանին որոշում է

Հաստատել համայնքի ավագանու թ. 16 հերթական նիստի օրակարգը

1. 2014թ. համայնքի բյուջեի հաստատման մասին

2. Քանաքեռավան համայնքի 0349-0019 կադաստրային համարի 0,0338 հա հողամասի մպատակային նշանակության փոփոխության մասին

3. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը աճուրդային վաճառքով օտարելու թույլտվություն տալու և այդ հողամասի մեկնարկային գնի հաստատման մասին

4. Համայնքի ավագանու 2013թ.դեկտեմբերի 11-ի թ. 53-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

5. Համայնքի ավագանու 2013թ. դեկտեմբերի 11-ի թ. 51 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

6. Համայնքի ավագանու 2013թ. դեկտեմբերի 11-ի թ. 56 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

Կողմ -8 Դեմ -0 Չեռնպահ -0

1. ԲԵԼԼՈՒՅԱՆ ՄԻՆԱՍ
2. ԳԱԼՍՏՅԱՆ ՄԱՆՎԵԼ
3. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՍՈՒՐԵՆ
4. ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱԿՈԲ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՐՅՈԺԱ
6. ՂԵՎՈՆԴՅԱՆ ՍԻԼՎԱ
7. ՊԱԼՅԱՆ ՎԱՐԴԵՍ
8. ՔԱՄԱԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ջ. ՔԱՄԱԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՆԱՔԵՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քանաքեռավան համայնք
ՀՀ,Կոտայքիմարզ, ք.Քանաքեռավան, (0224) 60029 qanaqeravan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 դեկտեմբերի 2013թվականի N 61-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ 2014Թ. ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով " Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով՝

Համայնքի ավագանին որոշում է

Հաստատել համայնքի 2014թ. բյուջեն համաձայն հավելվածի

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԵԼԼՈՒՅԱՆ ՄԻՆԱՍ
2. ԳԱԼՍՏՅԱՆ ՄԱՆՎԵԼ
3. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՍՈՒՐԵՆ
4. ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱԿՈԲ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
6. ՂԵՎՈՆԴՅԱՆ ՍԻԼՎԱ
7. ՊԱԼՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ
8. ՔԱՄԱԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ջ.ՔԱՄԱԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՆԱՔԵՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քանաքեռավան համայնք
ՀՀ,Կոտայքիմարզ, ք.Քանաքեռավան, (0224) 60029 qanaqeravan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 դեկտեմբերի 2013թվականի N 62

ՔԱՆԱՔԵՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 0349-0019 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԻ 0.0338 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով " Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ մասի և " Քաղաքաշինության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 14 [3] հոդվածի 9-րդ մասի դրույթների պահանջներով և քանի որ 0349-0019 կադաստրային համարի հողամասը ընդգրկված է համայնքի պարզեցված գլխավոր հատակագծի բնակելի կառուցապատման տարածքում՝

Համայնքի ավագանին որոշում է՝

Քանաքեռավան համայնքի 0349-0019 կադաստրային համարի 0.0338(0.0105 հա այլ հողատեսք, 0.0233 հա ջրովի վարելահող) հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրի բնակելի կառուցապատման:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԵԼԼՈՒՅԱՆ ՄԻՆԱՍ
2. ԳԱԼՍՏՅԱՆ ՄԱՆՎԵԼ
3. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՍՈՒՐԵՆ
4. ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱԿՈԲ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
6. ՂԵՎՈՆԴՅԱՆ ՍԻԼՎԱ
7. ՊԱԼՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ
8. ՔԱՄԱԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ջ. ՔԱՄԱԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՆԱՔԵՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քանաքեռավան համայնք
ՀՀ,Կոտայքիմարզ, ք.Քանաքեռավան, (0224) 60029 qanaqeravan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 դեկտեմբերի 2013թվականի N 63

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ԱՅԴ ՀՈՂԻ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՎԱՃԱՌՔԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով " Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 1-ին մասի 20 կետի պահանջներով՝

Համայնքի ավագանին որոշում է

Աճուրդային վաճառքով օտարել համայնքային սեփականություն հանդիսացող ներքոհիշյալ հողատարածությունը և հաստատել այդ հողի աճուրդային վաճառքի մեկնարկային գինը՝

	Հողատարածքի նկարագիր	Նպատակային նշանակություն	Չափը /հա/	Կարգ	Կադաստրային արժեքի %	Ծածկագիրը	Մեկնարկային գինը/հազ. Դրամ/
1	բնակավայրի	Այլ հող	0.0025		100	0135-0033	73500

Կողմ -9 Դեմ -0 Զեռնպահ -0

1. ԲԵԼԼՈՒՅԱՆ ՄԻՆԱՍ
2. ԳԱԼՍՏՅԱՆ ՄԱՆՎԵԼ
3. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՍՈՒՐԵՆ
4. ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱԿՈԲ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
6. ՂԵՎՈՆԴՅԱՆ ՍԻԼՎԱ
7. ՊԱԼՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ
8. ՔԱՄԱԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ջ. ՔԱՄԱԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՆԱՔԵՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քանաքեռավան համայնք
ՀՀ,Կոտայքիմարզ, ք.Քանաքեռավան, (0224) 60029 qanaqeravan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 դեկտեմբերի 2013թվականի N 64-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի Թ. 53-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով " Իրավական ակտերի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի պահանջներով՝

Համայնքի ավագանին որոշում է

Քանաքեռավան համայնքի ավագանու 2013թ. դեկտեմբերի 11-ի " Քանաքեռավան համայնքի տարածքում 2014թ. համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին" թ. 53-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն և որոշման տեքստը շարադրել նոր խմբագրությամբ՝

Քանաքեռավան համայնքում 2014թ.-ի համար սահմանել տեղական տուրքեր հետևյալ չափերով՝

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների/ներառյալ՝ ոչ հիմնական/ շինարարության /տեղադրման/ թույլտվությանհամար

1) հիմնական օբյեկտների համար՝

ա/ մինչև 300մ2 ընդհանուր մակերես ունեցող

անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական

/ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև

200մ2 ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար - 10000 դրամ

բ/ սույն կետի ա ենթակետով պարբերությամբ չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-ից մինչև 500մ2 ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար - 10000 դրամ

բբ) 501-ից մինչև 1000մ2 ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար - 15000 դրամ

բգ) 1001 և ավելի քառակուսի մետր ընհանուր մակերես ունեցող օբյեկտների համար - 30000 դրամ

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 մ2 ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար - 3000 դրամ

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար - 5000 դրամ

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների / բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ համար, եթե սահանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն - 3000 դրամ

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառնական նշանակություն, ապա, բացի սույն կետի "1" ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հովելվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվու՝ ստորգետնյա/ շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարությանհամար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների,

քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար - 5000 դրամ

4.Համայնքի տարածքում

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝

հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում

վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար - 3750 դրամ

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի

կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար - 3750 դրամ

5. Համայնքի տարածքում

1) Բացօդյա առևտուր կազմակերպելու թույլտվության

համար յուրաքանչյուր օրվա համար - 350 դրամ

2) Հողուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և /կամ/ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի համար ընթացիկ տարվա համար - 150000 դրամ

6. Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները /սաունաները/, խաղատները ժամը 24,00-ից հետո աշխատելու թույլտվության համար ընթացիկ տարվա համար

1) առևտրի օբյեկտների համար - 25000 դրամ

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար - 50000 դրամ

3) բաղնիքների /սաունաների/ համար - 200000 դրամ

4) խաղատների կազմակերպման համար - 500000 դրամ

5) շահումներով խաղերի կազմակերպման համար - 250000 դրամ

6) վիճակախաղերի կազմակերպման համար - 100000 դրամ

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի համար

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև

20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող

արտաքին գովազդի համար - 1500 դրամ

2) /թունդ ալկոհոլային/ սպիրտի պարունակությունը

20 և ավելի ծավալային տոկոս / արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար - 3000 դրամ

3) այլ արտաքին գովազդի համար - 1000 դրամ

4) դատարկ գովազդային վահանակների համար - 700 դրամ

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար ընթացիկ տարվա համար - 5000 դրամ

Քանաքեռավան համայնքում 2014թ. սահմանել տեղական վճարներ հետևյալ չափերով

1. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքները կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարական ավարտը փաստագրելու համար մատուցված ծառայության համար - 15000 դրամ

2. Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, ետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ նմա աշխատանքների համար - 6000 դրամ

3. համայնքի կողմից մրցույթներ

աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցների համար - 2000 դրամ

4. Համայնքի կողմից աղբահանություն կազմակերպելու համար՝ աղբահանության վճար 1 բնակչի համար յուրաքանչյուր ամսվա համար - 0 դրամ

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԵԼԼՈՒՅԱՆ ՄԻՆԱՍ

2. ԳԱԼՍՏՅԱՆ ՄԱՆՎԵԼ

3. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՍՈՒՐԵՆ

4. ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱԿՈԲ

5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ

6. ՂԵՎՈՆԴՅԱՆ ՍԻԼՎԱ

7. ՊԱԼՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

8. ՔԱՄԱԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ջ. ՔԱՄԱԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՆԱՔԵՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քանաքեռավան համայնք
ՀՀ,Կոտայքիմարզ, ք.Քանաքեռավան, (0224) 60029 qanaqeravan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 դեկտեմբերի 2013թվականի N 65

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի Թ. 51 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով " Իրավական ակտերի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի պահանջներով՝

Համայնքի ավագանին որոշում է

Քանաքեռավան համայնքի ավագանու 2013թ. դեկտեմբերի 11-ի " Գյուղապետարանի աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնական դրույքաչափերը հաստատելու մասին" թ. 51 որոշման հավելված 1-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 1-ի

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԵԼԼՈՒՅԱՆ ՄԻՆԱՍ
2. ԳԱԼՍՏՅԱՆ ՄԱՆՎԵԼ
3. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՍՈՒՐԵՆ
4. ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱԿՈԲ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
6. ՂԵՎՈՆԴՅԱՆ ՍԻԼՎԱ
7. ՊԱԼՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ
8. ՔԱՄԱԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ջ. ՔԱՄԱԼՅԱՆ

Հավելված N 1
Քանաքեռավան համայնքի
ավագանու 2013թ.-ի դեկտեմբերի 11-ի N 51 որոշման
Փոփ. Ավագանու 2013թ. դեկտեմբերի 19-ի N 65 որոշման

Քանաքեռավանի գյուղապետարանի աշխատակազմի
աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային
դրույքաչափերը

1. Աշխատակիցների թվաքանաիը `13
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը`

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Հաստիքի քանակը	Պաշտոնային դրույքաչափը /ՀՀ դրամ/	Ընդամենը
Քաղաքական և հայեցողական պաշտոններ			
Համայնքի ղեկավար	1	206000	206000
Համայնքի ղեկավարի տեղակալ	1	164000	164000
Համայնքային ծառայողներ			
Աշխատակազմի քարտուղար	1	168000	168000
Գլխավոր մասնագետ	2	164000	332000
Առաջատար մասնագետ	2	100000	200000
Առաջին կարգի մասնագետ	2	59550	119100
Տեխնիկական սպասարկման անձնակազմ			
Տրակտորիստ	1	59550	59550
Հավաքարար	1	59550	59550
Պահակ	1	63000	63000
Վարորդ	1	63000	63000
Ընդամենը	13		1434200

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՆԱՔԵՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քանաքեռավան համայնք
ՀՀ,Կոտայքիմարզ, ք.Քանաքեռավան, (0224) 60029 qanaqeravan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 դեկտեմբերի 2013թվականի N 66-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի Թ. 56 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով " Իրավական ակտերի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի պահանջներով՝

Համայնքի ավագանին որոշում է

Քանաքեռավան համայնքի ավագանու 2013թ. դեկտեմբերի 11-ի " Քանաքեռավան համայնքի ավագանու 2008թ. նոյեմբերի 20-ի թ. 1-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին" թ. 56 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները

1. Որոշման համարից հետո ավելացնել "Ն" տառը

2. Որոշման վերնագրում " լրացումներ" բառը փոխարինել " փոփոխություններ" բառով:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԵԼԼՈՒՅԱՆ ՄԻՆԱՍ
2. ԳԱԼՍՏՅԱՆ ՄԱՆՎԵԼ
3. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՍՈՒՐԵՆ
4. ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱԿՈԲ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
6. ՂԵՎՈՆԴՅԱՆ ՍԻԼՎԱ
7. ՊԱԼՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ
8. ՔԱՄԱԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ջ. ՔԱՄԱԼՅԱՆ